# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի փորձագետ Սիրարփի Մուղդուսյանի 2019 թվականի դեկտեմբերի 24-ից 2020 թվականի մարտի 09-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Սիրարփի Մուղդուսյանս Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի դեկտեմբերի 24-ից 2020 թվականի մարտի 09-ը ընկած ժամանակահատվածում և իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Պատասխաններ եմ ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատման և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածով Պրոբացիայի ոլորտն ընդգրկող միջոցառումների կատարման վերաբերյալ:

2. Պատասխանել եմ Պրոբացիայի ծառայությունում ստացված պաշտոնական գրություններին, ինչպես նաև քաղաքացիների, պրոբացիայի շահառուների դիմումներին և բողոքներին:

3. Մասնակցել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրոբացիայի շահառուներին ցուցաբերել եմ հոգեբանական աջակցություն:

4. Մշակել եմ մի շարք հուշագրեր պրոբացիայի շահառուների համար՝ մշակութային և կրթական միջոցառումներին և ծրագրերին մասնակցությունն ապահովելու նպատակով:

5. Մշակել և Պրոբացիայի ծառայության պետի հաստատմանն եմ ներկայացրել պրոբացիայի ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ:

6. Մշակել և ՀՀ արդարադատության նախարարություն եմ ներկայացրել պրոբացիայի շահառուների համար վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի անցկացման մեթոդաբանությունը:

7. Ուսումնասիրել և կարծիք եմ ներկայացրել Պրոբացիայի աջակցության ծրագրի վերաբերյալ, մասնավորապես՝ Պրոբացիայի ղեկավար անձնակազմի, պրոբացիայի ծառայողների և դրանց մասնագիտական վերապատրաստման ձեռնարկների վերաբերյալ:

8. Ընդունել և հոգեբանական աջակցություն եմ ցուցաբերել Պրոբացիայի շահառուներին, ինչպես նաև կատարել եմ ռիսկերի և պահանջմունքների գնահատում և կազմել եմ վերասոցիալականացման անհատական ծրագրեր:

9. Կազմակերպել եմ Պրոբացիայի շահառուների նկատմամբ մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման աշխատանքներ:

Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի փորձագետ

Սիրարփի Մուղդուսյան

09.03.2020 թ.